ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, «Տեառն-ընդառաջ։ Օրվա մեծ տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը, բնարան ունենալով «Լույս ի յայտնութիւն հեթանոսաց»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստը, ուր քննվեցին Ստամբուլի Ղալաթիա թաղի հայոց նոր կառուցվելիր եկեղեցու նախագիծը, ինչպես նաև Մայր Աթոռի հին պարիսպների քանդման և Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու ներքին ձևավորման հարցերը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ երեկոյան, Հոգևոր Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ Ճեմարանի հերթական գրական-գեղարվեստական երեկոն, ուր Գ լսարանի ուսանող տիրացուներ Ժիրայր Կոնսուլյանը և Կարպիս Սերայդարյանը ընթերցեցին իրենց գրած քարոզները։

Երեկոյին ներկա էին Վեհափառ Հայրապետը և Մայր Աթոռի միաբանները։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողոսյանը, բնարան ունենալով «Ով կենցաղոյս հանապազ դիս ալեկոծեմ, մրրկեալ ալիք թշնամին ինձ յորուցանէ, նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն» ապաշխարության շարականը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 2-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, թեմական գործով Մայր Աթոռ ժամանեց Ադրբեջանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բուն Բարեկենդան»։ Մայր Տաճարում փակ վարագույրի ետև պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը բնարան ունենալով «Ով է մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՄԱՐՏԻ 5-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի ուսանողները, վերատեսուչ գիրաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ, միօրյա պտույտի գնա-

ցին դեպի Այդը լիճը։ Զբոսապտույտին մասնակցում էր նաև Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 7-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Տաճարում սկսվեց Մեծ պահոց հատուկ «Արևագալ»-ի հանդիսավոր առաջին ժամերգությունը։ Հոգևոր Ճեմարանի ուսանողները, ղեկավարությամբ արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանի, դաշն կերպով և շնորհալիորեն երգեցին «Արևագալ»-ի ժամերգության սրտահույզ մեղեդիները։

Արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 9-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ ճարտարապետական հանձնաժողովի նիստը։ Ժողովում քննարկվեցին Տրդատի գռան նորոգության և հին պարիսպների վերացման հարցերը։

❁❁❁

ՄԱՐՏԻ 11-ԻՆ, «ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ», Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Հավուր պատշաճի քարոզ խոսեց Հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։